

նալ Հայոց Նաւասարդի օրերը, մօտաւորապէս Յունիս 24ի շրջանը, թէ եւ Հայ Տօնականները «Տօն ամենայն Մարտիրոսաց» կ'ենթադրեն Յայտնութեանէն ետքը եւ Տեառնընդառաջէն յառաջ:

Փաւստոս Գ. 11 յառաջ կը բերէ Ս. Վրթանէսի ներքողականը, ուր «ի մեծի պատերազմի Պարսից եւ Հայոց ընդ միմեանս» ինկած քրիստոնեայ նահատակները դրուատելով կ'ըսէ Ս. Վրթանէս ի մէջ այլոց. «Արդ մի լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ճշմարտութեանն առ նահատական. դիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտեանից, զի ամենայն ոք գտցա յիշատակ քաջութեան իբրև Գրիստոսի նահատակաց՝ անխափան կատարեսցէ: Եւ մեք տօնս արասցուք եւ ուրախ լիցուք...: Եւ եդ օրէնս ընդ աշխարհն մեծ քահանայապետն Վրթանէս [զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. եւ որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանելիցն ի նմանութիւն նոցա. եղ կանոն] յիշել զտօսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարազին, յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն. եւ ապա զկնի նոցա զնոցայն»: Այս խօսքերը կ'ենթադրեն Հայ Եկեղեցական տարւոյն մէջ «Ամենայն Մարտիրոսաց» տօն մը, թէեւ մատնանիշ չեն ընէր օրը, երբ կը տօնախմբուէր այն:

Քառակուսի փակագծի մէջ անուշաձուտները յայտնապէս յաւելուած են ուրիշ գրէք եւ կը հային Վարդանանց պատերազմներու (451 եւ 572): Վերջնոյս համար ունինք համապատասխան տեղիք մը եղիւն վարդապետի «Հայոց Պատերազմի պատմութեան» մէջ, ուր, առթիւ 572 Փետրուար 2ի պատերազմին, ըսուած է. «Իբրեւ այս ամենայն աջողութիւն լինէր երկիւղածացն Աստուծոյ, ամենայն եպիսկոպոսունք եւ երկցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին... զտօն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին» (էջ 139): Մարտիրոսներու յիշատակն «խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն» կը նշանակէր տօնել Յունուարի ընթացքին: Ասկէ թերեւս Տօնականի յիշատակն, զոր վերագոյն յիշեցինք: Այս չէ սակայն Սահակի ընծայուած կանոններու «Տօնն ամենայն Մարտիրոսաց», որ կը յաջորդէր Յովհաննու Մկրտչի տօնին:

Ճիշդ այս շրջանին այսինքն Վարդապետն յառաջ, կը տօնէին «Ամենայն Մարտիրոսաց յիշատակը» նաեւ Ասորիները, ինչպէս կը տեղեկանանք Կարխայի Վկաներու պատմութեանէն: Կը գրէ վկայագիրը. «Կարդարած են մեր Նախահայրերը, որ (Առաքելոց տօնի) Նախատօնակին տօնախմբուի այն ախանաւոր Մարտիրոսներու, Մետրապոլիտներու, Եպիսկոպոսներու, Սարկաւաղներու եւ 12.000 օրհնեալ հօտին յիշատակը, որոնք պսակուեցան Քրիստոսի համար: Իսկ Ս. Առաքելներու յիշատակի շարաթ օրը տօնուի Մարտիրոսներու յիշատակը, որոնք անոնց երեւելի նախահայրերն եղան¹⁰»: Առ այս կը ծանօթագրէ Հովհանն. «Այս տեղեկութիւններու համաձայն Մարտիրոսներու յիշատակը կը կատարուէր Առաքելներու պահէին 2. շարաթուան Ուրբաթ եւ Շաբաթ օրերը¹¹: Առաքելոց պահէր կը սկսէր Պենտեկոստէի երկուշաբթի եւ կը տեւէր 7 շաբաթ եւ նոյն շաբաթուան շաբաթ օրով կ'աւարտէր: Յաջորդ կիրակի օրը, որ է մեր (լատինական) է. կիրակին յետ Պենտեկոստէից, կը տօնախմբուէր ԺԲ. Առաքելներու յիշատակը»: Այս միջոցն է Հայոց «Քառասնորդք Առաքելական տօնից», որուն վրայ պիտի խօսինք քիչ յետոյ:

Յեցած ասորական այս հին սովորութեան վրայ, կրնանք վստահօրէն ըսել թէ Հայոց ալ Ամենայն Մարտիրոսաց տօնը կը կատարուէր յետ Պենտակոստէից 2. Կիրակի (Ուրբաթ եւ) Շաբաթ օրը: Յունաց Եկեղեցին *τοιοσχη τῶν ἁγίων μαρτυρησάτων*, «Կիրակի սրբոց վկայելոց» կ'անուանէ յետ Պենտակոստէից Ա. Կիրակին: Ամենայն Մարտիրոսաց ի պատիւ ճառեր խօսած են Ս. Եփրեմ եւ Յովհ. Ոսկերեան:

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

¹⁰ G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer. Leipzig 1880, էջ 60:
¹¹ Հ.մ.ա. Assemani, Bibliotheca Orientalis, Գ. 2, էջ 383, 387 եւ Աւրբուշի:

ՀՆՅ ՃԱՆՈՒՄԷ՞ ԷՐ ՄՕՐԻԿ ԿԱՅՐ

Ընդհանուր պատմութեան թատերաբեմին վրայ երեւցող աչքառու դէմքերէն է Մաւրիկիոս Կայսր (580—602): Հայ աւանդութիւնը զինքը ծագումով Հայ կը ճանչնայ: Ուրիշներ յոյն, նոյն իսկ հռովմայեցի գիտեն: Այս խնդրի լուսարանութեան նուիրուած է Paul Goubert Յիսուսեան Հօր Maurice et l'Arménie. Note sur le lieu d'origine et la famille de l'Empereur Maurice յօդուածը Échos d'Orient թերթին մէջ 39 (1941/42), 333—413: Այս շատ շահեկան ուսումնասիրութիւնը մեր ընթերցողներուն ծանօթացնելու դիտումով, կ'ամփոփենք հոս անոր կարեւոր բովանդակութիւնը:

Հա՞յ է Մօրիկ: Հայ աղբիւրներու համաձայն հաստատական է պատասխանը¹: Նոյն կարծիքը յայտնած են նաեւ քանի մը եւրոպացի պատմագէտներ²: Օտար աղբիւրներէն միայն Գէորգ Կրօնաւոր³ եւ Յովել⁴ կու տան Մօրիկի Հայ ծագում, նոյնպէս Հայ կը ճանչնայ զինքը ԺԳ. դարէն յայն Գրիգորի մը⁵:

Ծննդավայր: Հայ պատմիչները Արագածոտնի Օշական աւանը ցոյց կու տան անոր հայրենիքը⁶, իսկ Կիրակոս Գանձակեցի լսած է թէ ուրիշներ Տարօն ծնած է կ'ըսեն (տպ. Վենետիկ 1865, էջ 27): Շապուհ Բագրատունիի ընծայուած պատմութիւնը կը հաղորդէ թէ Մօրիկի հայրը Գաւիթ, Անիի մէջ պարտիզպան մըն էր (տպ. Էջմիածին 1921, էջ 3): Կը հաւաստուի նաեւ թէ Անիի մօտակայ Շիրակաշատ քաղաքին անունը փոխուած ըլլայ Մարիկոպոլիս⁷: Մօրիկի անունով եպիսկոպոսանիստ քաղաք մ'ալ կը

¹ N. Adontz, Les légendes de Maurice et de Constantin V. empereurs de Byzance, Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire orientales. T. II, 1934, Mélanges Bidez, Fasc. I, 1—14. Հ. Կ. Տէր Սահակեան, Հայ կայսերք Բիւզանդիոնի, Վենետիկ 1905:
² Dr. Martial, Les Peuples du Caucase (Revue d'Anthropologie 1936), էջ 71: J. de Morgan, Histoire du peuple Arménien, Paris 1919, էջ 280:
³ Chronicon II, հրատ. Boor, էջ 652, 662:
⁴ Migne P. G., 134, 265.
⁵ A. Wirth, Aus orientalischen Chroniken. Frankfurt 1894.
⁶ Ստ. Ասողիկ, Պետերբուրգ 1885: Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ., 294: Օշականի անունով շրջող առածին մէջ, թէ «Աստի յՕշական խունկ ստաշի» նկատելի է, որ ուղղակի Մօրիկի մասին յիշատակութիւն չկայ, թէպէտ Մօրիկի հետ կապակցութեամբ յառաջ կը բերուի:
⁷ Մ. Խորենացոյ Աշխարհազրուութիւն. Վենետիկ 1881, էջ 34: Հ. Գ. Ալիշան, Շիրակ. Վենետիկ 1881, էջ 16 «Մէլիքի ըստ թուրքաց»:

զանուի միջին Ասորիք, Maurikiupolis⁸. Ուստի այս կրկին նոյնանուն քաղաքներէն ոչ մի հետեւութիւն կարելի է հետեւցնել Մօրիկ կայսեր ծննդավայրի նկատմամբ:

Այսպէս Հայ աղբիւրները: Իսկ յոյն, լատին, ասորի եւ դպտի աղբիւրներ միաբերան Կապադովկիոյ Արաբիստոս⁹ քաղաքը ցոյց կու տան Մօրիկի հայրենիքը: Ուշադրութեան արժանի է Ժամանակակից ասորի պատմիչը Յովհաննէս Եփեսացի, որ ամենեւին լուր չունի Մօրիկի հայկական ծագումի մասին, իսկ անոր ծննդավայրը¹⁰ Արաբիստոս կը նշանակէ: Արդեօք յունական աղբիւրներու արձագանքը չէ՞ զոր կը լսենք Կիրակոս Գանձակեցիի մօտ¹¹. «Կէսք ասեն զսա յԱրիստոս զեղջէ Կապադովկեցոց զոր յետոյ քաղաք շինեաց զօրավար Տիրերի» (էջ 28—29): Յովհաննէս Եփեսացիի (էջ 206) եւ Միքայէլ Ասորիի (էջ 354) համաձայն կայրը իր Արաբիստոս ծննդավայրը երկու անգամ կառուցանել կու տայ, բայց միշտ զո՞հ կ'ըլլայ աղետալի երկրաշարժներու:

Մօրիկի ընտանեկան ծագումը: Ն. Ադոնց (էջ 7) համաձայնցնել ջանալով Հայ ու օտար աղբիւրներու վկայութիւնները, կը համարի թէ Յունտինիանոսի օրով 536ին, երբ Հայ ստուար բազմութիւն մը գաղթականի ցուպը ձեռին կայսրութեան երկիրները կը գիմէր, փոխադրուած ըլլային նաեւ Մօրիկի ծնողքը Արաբիստոս քաղաքը, ուր աշխարհ կու գայ Մօրիկ:

Օտար աղբիւրները շատ անմիաբան են այս հարցին շուրջ, որովհետեւ մինչ լատին պատմագիր մը Յոյն կը համարի, անդին յոյնը կը հաստատէ թէ Հռովմայեցի է ան:

Այս հարցը ստուգելու համար նկատի առնուելու են միայն Մօրիկի Ժամանակակից պատմագիրները: Հայ աղբիւրներէն Սերէոս եպիսկոպոս որ եւ է յիշատակութիւն չէ ըրած Մօրիկի հայկական ծագումի մասին¹¹: Յատկանշական է այս լուրթիւնը:

⁸ Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches. Bruxelles 1935, էջ 215:
⁹ Եւազր, Migne P. G. 86, 2832; Պաւղոս Սարկաւազ, Historia gentis Langobardorum, Hannover 1887, էջ 100: Միք. Ասորի, Ժամանակագրութիւն, Պարիս 1899—1924, էջ 358: Յովհաննէս Նիկիուցի, Պարիս 1899—1924, էջ 523: Արաբիստոս է այսօրուան Եւրբուրգը, Մարաշէն 60 քմ. հիւսիս, Կեսարիայէն Մելիտինէ ճամբուն վրայ: Հ.մ.ա. E. Stein, Studien zur Gesch. d. byz. Reiches Stuttgart 1919, էջ 66:
¹⁰ Lovaniae 1936, էջ 134, 199:
¹¹ Պատմութիւն ի Հերակն. Պետերբուրգ 1879, էջ 19—23, 33—100:

Ուշագրութեան արժանի է Թէոփիլակոսոս Սիմոնիանի լուսթիւնը իր հերոսի ծագումին նկատմամբ, մինչ անդին չի մոտար յիշատակելու թէ հայ էր Հերակլիոս¹² գործարն, ինչպէս նաև նոյնանուն կայսրը (էջ 120): Պողոս Սարկաւաղի համաձայն «Mauricius... primus ex Graecorum genere in imperio confirmatus est» այսինքն թէ աւաջին յունագրի կայսրն է որ զահ բարձրացաւ (էջ 100): Պատմագիրը կ'ուզէ ըսել թէ մինչ իր նախորդները Եւրոպայի հռոմէական գաւառներէն (Թրակիա) էին, Մորիկ կայսրը կու դար արեւելեան գաւառներէն (Կապադովկիա):

Յունական աղբիւրներէն ամէնէն մեծ հեղինակութիւնը կը վայելէ Եւազը, որ անձնապէս ծանօթ էր թէ՛ Մորիկի ու թէ՛ անոր ընտանիքին: Իրեն համաձայն Մորիկ թէ՛ իր անունը եւ թէ՛ իր ազգութիւնը հին հռոմէական ունի (էջ 2832): Ասկէ կը հետեւի թէ աւելի իրաւացիօրէն քան Հ. Կ. Տէր Սահակեան եւ կամ Հայր Ալիշան — որոնք հարաւոր կը համարին, որ Մորիկի հայրն եղած ըլլայ հայ մը, իսկ մայրը հռոմայեցի — կրնանք հաստատել թէ Մորիկ ընծիւզն է յոյն եւ հռոմայեցի ընտանեկան զուգաբուրութեան մը:

Թէպէտ փորձեր եղած են հոս հռոմայեցի աստիճանը իրրել զուտ զինուոր մեկնելու, ինչպէս գործածութեան մէջ կը գտնենք *romani* (*milites*) բառը ուրիշ պատմագիրներու շարքին մէջ, նոյն իսկ Եւազրի մօտ, բայց P. Goubert շատ տրամաբանօրէն կը մերժէ հոս այսպիսի մերձեցում մը, որովհետեւ Եւազրի այս վկայութեան մէջ ընդհանուր միտքով չի գործածուիր *romani* բառը, այլ հին հռոմէական հակադրութեան կը զրուի նորին (Կ. Պոլիս) հետ:

Ն. Ալոնց հակասութիւն կը տեսնէ, որ հռոմայեցի մը լքէր իր հանգիստ բնակութիւնն եւ երթար հաստատուիլ կայսրութեան այնքան հեռաւոր ու անտոյզ սահմանները (էջ 7): Սակայն գիտենք թէ Գոթացոց ու Լոնգոբարդացոց արշաւանքի ժամանակ, շատ մեծամեծներ կը թողուին արեւմուտք՝ ապաստանելու համար արեւելեան գաւառները, եւ բաց աստի, ամենեւին հարկ չկայ Մորիկի հայրը իշխանական երեւելի տոհմէ մ'ընդունելու, բաւ է ի՞նչ եղած ըլլար ան

արեւելեան գաւառներու մէջ գործող հռոմէական լեզունական մը, բանակային մը:

Մորիկի հօր հռոմէական ծագումը ընդունելով կարելի է միայն մեկնել նոյն ինքն Մորիկի եւ անոր ընտանիքին անունները: Հայրը կը կոչուէր Պողոս¹³, եղբայրը՝ Պետրոս. անուններ, որոնք մասնաւորապէս հռոմէական շրջանակներու մէջ սիրելի եղած են: Եթէ Մորիկ հայ եղած ըլլար իր արեւակիցներէն գոնէ մի կամ միւսը հայկական անուն կրած պիտի ըլլար:

Իր եղբայրը Պետրոս, որ ապա Փոկասէն սպանուեցաւ, կը կոչուի Ստրատելատ (*Magister Militum*) իշխան Թրակիոյ, Կիւրապաղատ եւն¹⁴:

Գորդիա իր քոյրը կ'ամուսնանայ Փիլիպպիկոս անունով հաւանաբար յոյն մը հետ:

Թէոփիլասէ թէ ընթացիկ լատիներէն կը խօսէր, վկայ են անոր նամակագրութիւնները:

Դամիանոս մայր կ'ըլլայ Աքենոգենիսի (*Աթանազիոսէս*) որ ապա Արարիոյ Պետրա քաղաքի եպիսկոպոս կը կարգուի: Դամիանոս կրօնաւորական քոյրը կ'ընդունի Կ. Պոլիս եւ կը մեռնի իրրել արքայապետ Երուսաղէմի մէջ:

Նոյնպէս Սուպատրա Մորիկի դուստրը կուսութեան ուխտով կը նուիրուի Աստուծոյ եւ կը տօնուի մինչեւ այսօր Յունաց Յայսմաւուրքի մէջ 9 Նոյեմբերին:

1925ին Երուսաղէմ գտնուեցաւ տապանագիր մը, ուր կը յիշուի Անատոլիա Արարիւստէն: Կը կարծուի թէ սա Մորիկի մէկ քոյրը ըլլայ: Յիշատակարանը 615—630ի շրջանէն է: Այսու կ'արդարանայ այն աւանդութիւնը, թէ Փոկասի կոտորածէն երկու հոգի միայն կ'ազատին, Մորիկի մէկ դուստրն եւ քոյրը¹⁵:

Մորիկ հաւասարապէս կը տիրանար թէ՛ յունարէնի եւ թէ՛ լատիներէնի: Թէ ծանօթ էր հայ լեզուի չունինք ոչ մի ապացոյց¹⁶:

Կայ եւ ուրիշ պարագայ մըն ալ. կը յիշուի թէ Տիրբերիոս խարտեաչամօրուս եղած ըլլայ, մինչ Հերակլ կը կրէր թաւարժի

¹² Թէոփիլ, էջ 57, Մեանդր, Leipzig 1871, էջ 97, Թէոփանէս, հրատ. Boor, էջ 271:
¹³ Թէոփիլ, Թէոփանէս, Կեղբենոս եւն:
¹⁴ Couret, La Palestine sous les empereurs grecs 213.
¹⁵ Թէոփիլ, 307 եւն:

¹² Պատմութիւն, Leipzig 1887, էջ 110:

ստուար չիկախայտ մօրուք մը, իսկ Մորիկ կ'ածիլուէր Հռոմայեցոց սովորութեան համեմատ¹⁷:

Մորիկ հայասեաց մը չէր, բայց իր վարուելակերպը Հայոց հանդէպ չէր կրնար հայու զգածումի հետ միարանիլ: Սերէոս կը յիշէ Մորիկի մէկ նամակն առ Պարսից արքայն. «Այդ մի խոտոր եւ անհնազանդ են, կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց եկ, ես զիմս ժողովեմ եւ ի Թրակի գումարեմ եւ զու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրեւելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին, եւ եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն, եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դռքս յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի» (էջ 47): Նոյն խստութիւնը կը բանեցնէ Մորիկ նաև Հայոց եկեղեցական խնդիրներուն մէջ:

Յոյն կայսեր վարմունքը յեղափոխութեան ուղին կը դարձուցանեն աղբիւն մէջ: Ապստամբութիւնը նուաճելու համար կայսրը զօրք կը գումարէ եւ կը յաջողի Սմբատ Բագրատունին ձերբակալելու: Ատեան կը գումարուի: Հայ իշխանը մահուան կը դատապարտուի: Քաղաքապետ կայսրը սակայն կը շնորհէ մահուան պատիժը, որով խաղաղութիւնն ալ կը վերահաստատուի: Հայ աղբիւրները այս ազատութիւնը կը վերագրեն ինքնին Սմբատի քաջագործութիւններուն եւ կայսրուհւոյն թախանձանքներուն (Սեր. 53):

Հայ աւանդութիւնը մեկնելու փորձ մը: Ն. Ալոնց, տեսնելով Մորիկ կայսեր այս թշնամական դիրքը Հայոց հանդէպ, կը բանաձեւէ իր եզրակացութիւնը այսպէս. քանի որ նոյն իսկ հայ աղբիւրները կը հաստատեն թէ Մորիկ աւելի քան հասցուցած է հայ աղբիւն քան թէ օգուտ, եւ այս պարագան չէր կրնար փայտայել աղբային հպարտութիւնը, այսպիսի անձ մը հայ համարելու, ուստի եթէ Հայք սակայն եւ այնպէս հայ կ'ընդունին զինքը, կը նշանակէ թէ աւանդութիւնը ճշմարտութեան կորիզ մ'ունենալու է (էջ 4): Ասոր վրայ կ'աւելնայ նաև ժողովրդական առած մը, որ հայ ժողովուրդի՝ Մորիկ կայսեր հանդէպ տածած սիրոյն ու զնահատանքին թարգմանը կը հանդիսանայ. կ'ըսուի. «Իրրել ի ժամանակս Մորիկայ նստեալ ես

յանհոյս¹⁸»: Թէպէտ եւ այս ժողովրդական առածը կը հակասէ պատմութեան տուեալներու, բայց շատ ուղիղ կ'անդրադարձնէ P. G. թէ յարաբերաբար առնելու ենք հոս այս առածը, այսինքն թէ Մորիկ կայսեր մահով, Հայոց համար շատ աւելի դառն շրջան մը կը յաջորդէր, պատերազմներու շարք մը, որ այրեացաւեր կը դարձնէր երկիրը, ուստի անձկանքով կը յիշէր ժողովուրդը անցած ժամանակներու նուազ փոթորկալից շրջանները: Թէ իրապէս միայն այս իմաստով առնելու ենք, կը հաստատուի Հայունաց Պաշի պատմութենէն, ուսկից յառաջ բերինք առածը: «Ի ժամանակս Մորիկայ թաղաւորին Յունաց էր խաղաղութիւն աւանայն աշխարհիս, զոր ոմանք յառակա արկեալ ասէին, թէ իրրել ի ժամանակս...» (Արարատ, անդ): Հայաստան եւ դրացի երկիրները խաղաղութիւն վայելեցին միայն 591—602 տարիներուն:

Մորիկ կայսեր հայ համարուելուն գլխաւոր պատճառն է այն իրողութիւնը, որ Կապադովկիա, ուր կը գտնուէր Արարիւսոս քաղաքը, աշխարհագրօրէն Հայաստան կը կոչուէր¹⁹: Այսպէս՝ պատմութեան մէջ չեն պակսիր նաև ուրիշ բազմաթիւ շփոթութիւններ, ուր երկրի մը վարչական-աշխարհագրական անունը կը յատկացուի նոյն աշխարհամասի բնակչութեան: Որոշ հեղինակներու քով շատ մէկին կը տեսնուի այս անորոշութիւնը, որոնք Կապադովկիա եւ Հայաստան, համազօր դադափառներ կը նկատեն եւ նոյն իսկ հակառակէն²⁰: Այս չափով անշուշտ հայ կարող ենք համարիլ Մորիկը:

Հայ աւանդութիւնը Մորիկի հօր մասին: Հայ պատմիչները (Կիրակոս Գանձակեցի, Շապուհ Բագրատունի եւն) Մորիկի հօր մասին ժողովրդական գրուազ մը կը պատմեն: Մորիկի հայրը, պարսիկացի գիւղացի մը, որ մը պատգամաւորութիւն կը ստանայ իր որդիէն, որ բախտով զահ բարձրացած էր, երթալու արքունիք իրրել խորհրդա-

¹⁸ Պատմութիւն Հայունաց իաշի, Արարատ 1888, էջ 399: նոյն առածը ունի նաև Առ. Դարբիժեցի էջ 47: յառաջ կը բերէ նաև Սիմէոն Լեհացի, Ուղղեղութիւն, Վիեննա 1936, էջ 87:
¹⁹ Իրողութիւնս ժամանակ կը կոչուէր Երկրորդ Հայք, Յուստինիանոսի օրով՝ Երրորդ Հայք, իսկ Մորիկ կ'անուանէ Ապաշիմ Հայք: Հմմտ. Notitia dignitatum, հրատ. Seock էջ 4, 54, 55;
²⁰ Հմմտ. Թէոփանէս, 295, Յովհաննէս Մուքոս. Migne P. G. 87, 2919, Mansi, Concil. Հար. 9. 569 եւն:

¹⁷ Կեղբենոս 752, 756, 781, հմմտ. Vailhé, Échos d'Orient, 1910:

կան: Այն պարագային, որ մերժուելու ըլլայ հրաւերը, կը խնդրէր Կայսրը, որ զոնէ գեղեցիկ խրատ մը տայ իրեն, որուն համաձայն ուղղուի ինքը: Հայրը հրաւերը կը մերժէ. երկրորդ խնդրանքին մասին առանց որեւէ խօսք ըսելու կը սկսի «զմեծամեծ կաղամբան, որ ի պարտիդի անդ, արմատախիլ առնել, կտրել զգլուխս եւ ծածկել ընդ հողով եւ զմանունս փայփայել եւ յօրինել»: Պատգամաւորները զարմացած «համարեցան զնա բախած»: Վերադարձին կը պատմեն եղելութիւնը: Մօրիկ կը ծիծաղի, բայց հասու կ'ըլլայ հօր խրատին ու «կալեալ զմեծամեծս, զոր կարծէր թէ սատան են թագաւորութեան իւրոյ, երազ՝ զամենեսեան, զի մի ցաւ ինչ լինիցի. եւ զփոքունսն ի տեղիս նոցա կարգեաց» (Կիր. Գանձ. 28): P. G. իրաւամբ առասպել կը համարի այս աւանդութիւնը: Հ. Ն. Ակինեան արդէն 1930ին ուշադիր ըրած էր թէ այս աւանդութիւնը զուտ ժողովրդական զրոյց մըն է, որ կը գտնուի նաեւ ուրիշ ազգերու քով: «Կիրակոսի 'ասենք ցոյց կու տայ թէ ինքն ալ լսած է ժողովրդեան բերանը»²¹:

Եզրակացութիւն: Ազոնց կը հետեւցնէ թէ Մօրիկի ազգութեան խնդիրը թէպէտ շատ դժուարութիւններու կապուած է, սակայն հայ ազգիւրներն ալ հաւասարապէս զնահատելու է օտարներու կից (էջ 8 եւ 9): Սակայն անընդունելի է հաւասար գծի վրայ գնել հայ հակասական եւ նոյն իսկ ուշ դարերու կցկտուր յերկրումքները, ժամանակակից ստոյգ եւ իրար հաստատող յոյն եւ ասորի վկայութիւններու հետ: Մասնաւոր արժէք մը կը ներկայացնեն մանաւանդ վերջիններս, որոնք ամենեւին շահ մը չունէին Մօրիկը հելլենացնելու:

Հայ միակ ժամանակակից ազգիւրը Սերիոս ամենեւին միտութիւն չի ցուցներ Տիբերի այս յաջորդը հայրենակից ներկայացնելու եւ անտարբերութեամբ մը «թագաւորն յունաց» «կայսրն յունաց» միայն կը յորջորջէ:

Մօրիկ իր ծննդաբաղաբը, Արարիւսոս, շինուածներով կը զարգարէ, որ աւելի մեծ ցոյց մըն է իր ծագումին, քան Մաւրիկոսովիս անունը, որ տրուած է հայ կամ ասորի քաղաքի մը:

Մինչ Յովհաննէս Եփեսացի Մօրիկի Կապադովկիական ծագումը կը մատնանչէ,

²¹ Հանդէս Ամսօրեայ 1930, էջ 364:

Եւազր, որ Մօրիկի ընտանիքին հետ աւելի սերտ կապեր ունեցած է, կը պաշտպանէ անոր հռովմայեցի ազգութիւնը:

Մօրիկի անունը, արտաքինը, նկարագիրն ու ատակութիւնը լատիներէն արտայայտուելու, իր յարաբերութիւնները Գրիգոր Պապի հետ, եւ անոր կրօնական համոզումը գերադանցօրէն հռովմէական սկիզբ մը ցոյց կու տան Մօրիկի հօր համար: Վերջինս ո՛չ հայ էր եւ ո՛չ ալ հասարակ դասակարգէն մէկը կ'երեւայ, քանի որ կրցած էր նոյն իսկ Բիւզանդիոնի ծերակուտի նախագահութիւնը վարելու (Յովհ. Եփ. 203): Այս սպասույցներէն կը հետեւի թէ հաւանականութիւնը՝ հակառակ Հ. Տէր Սահակեանի եւ Հ. Ալիշանի ենթադրութեան թէ Մօրիկի Հայրը եղած ըլլայ հայ մը, իսկ մայրը յոյն, կը հակի ի նպաստ հօրը հռովմայեցի ծագումին, որ երկար տարիներէ ի վեր հաստատուած էր արդէն արեւելեան դաւառները²²:

Սակայն Մօրիկ արեւելցի կը համարուի հակադրութեամբ ուրիշ կայսրներու, որոնք ծնած էին արեւմտեան դաւառները: Ազնուական ծագումի հարց չենք հետապնդեր կը բաւէ եթէ հռովմէական ցեղէ մը սերած ըլլայ:

Կեղրակացնէ Յօղուածաղիբը. Մօրիկ ծնած էր Կապադովկիա, որ զանազան շրջաններուն Հայաստան ալ անուանուած է, ուստի կրնար հայ ալ համարուել ուրիշ շատերու նման²³: Մօրիկ ծնած է յունախօս ընտանիքէ մը, որ հաւանօրէն հռովմէական ծագում ունեցած է:

Հ. Օ. ՍԵՔՈՒԼՍՑ

²² Հմմտ. A. Merk, Byz. Zeitschrift, 1910, 547—549.

²³ Կիրակոս Գանձակեցոյ վերոյիշեալ տեղիքն. «Կէսք ասեն զսա յԱրփասուս գեղջէ Կապադովկեցոց, զոր յետոյ քաղաք շինեաց զօրավար Տիբերի» (էջ 28—29), իրեն ազգիւր ունի Միքայէլ Ասորոյ ժամանակագրութեան հայերէն թարգմանութիւնը. «Եւ հրամայեաց (Մօրիկ) ընդարձակել զԱրփասուս քաղաք, ուստի ինքն էր, որ է յերկրորդն Հայք. որ զկնի չորս ամի շրջեցաւ ի շարժմանէ, եւ դարձեալ շինեաց լաւապէս քան զառաջինն մեծաւ հողաբարձութեամբ. եւ վերստին ընկզմեալ նոյն շարժմամբ». Երուսաղէմ 1871, էջ 281: Իսկ 1870ի տպագրութիւնն ունի. «Եւ էր Մօրիկ Կապադովկացի յԱրփ(ա)սուս գեղջէ... Բայց Մօրիկ զԱրփ(ա)սուս շինեաց քաղաք մեծ... եւ զի յերկրորդ Հայս էր գիւղ նորա, ասեն թէ Հայ էր ազգաւ» (էջ 299—300):

ՄԵՀՈՒՆՆ ՏՈՒՆ ԶՊԵ ԸՆՏԵՑՈՒՄ ԵՎ ԵՍՊՈՒՆԻ ԵՍՊՈՒՆԻ ԿՐԱՅ

† 3. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ (10 ՅՈՒԼԻՍ 1870—8 ՅՈՒԼԻՍ 1944)

Մխիթարեան Մխարանութեան արդիւնաւոր անդամներէն էր Հ. Վարդան Հացունի, որ գրական եւ կրթական ասպարէզներու նուիրուած՝ զործած էր իր ամբողջ կեանքին ընթացքին որպէս ժիր եւ անխոնջ մշակ:

Հայագիտութիւնը կ'ողբայ իր մահը, ու այնչափ աւելի՝ որչափ Հանդուցեալը հայագիտական մարզին մէջ ցոյց տուաւ բազմակողմանի գործունէութիւն: Ան մեկնեցաւ լեզուական եւ մատենագրական, եկեղեցական-պատմական եւ ազգագրական ընդարձակ եւ մանր արժէքաւոր ուսումնասիրութիւններ ձգած Ազգին:

Հ. Վ. Հացունի ծնած է 10 Յուլիս 1870ին Պարտիզակ: Հազիւ 15ամեայ պատանի կ'երթայ Վենետիկ եւ կը մտնէ Մխիթարեան Կղերանոց: Իր ուսումներու ընթացքը յաջողութեամբ կատարելով՝ կ'անդամագրուի Մխարանութեան եւ 1892 Յունիս 5ին կը ձեռնադրուի քահանայ: Ապա քառասուն տարի անընդհատ՝ կը գտնենք զինքը Մայր վանքի եւ Մխիթարեան վարժարաններու մէջ իբրեւ անդամ վարչութեան եւ ուսուցիչ: 1918—1920 եւ 1929—1932 կը վարէ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի տնօրէնութիւնը: Մխարանութիւնը՝ իր քահանայութեան եւ գրական գործունէութեան 50ամեակը տօնեց 1942ին: Արդէն 1932էն սկսեալ սուսնաճացած էր Ս. Ղազար, եւ կ'ապրէր բոլորանուէր բանասիրական աշխատութիւններու փարած:

Հ. Վ. Հացունի առաջին անգամ 1893ի Յունուարին երեւցաւ գրական ասպարէզի վրայ, Հ. Վ. Սումուկեան ստորագրութեամբ, իր «Կենսագիր եւ նկարագիր Եզնկայ վարդապետի Կողբացոյ» յօդուածաշարքով: 1896ին իսկ կը ստորագրէր Հ. Վ. Հացունի այս անունով ծանօթ է ան գիտական աշխարհին:

Իր գրական գլխաւոր — առանձին հատորով հրատարակուած — աշխատութիւնները թէ դասաւորել փորձուինք՝ պիտի գտնենք անոնց մէջ՝

- Ա. Լեզուաբանական գրութիւններ.
 1. Ուղղագրութիւն եւ առոգանութիւն հայերէնի (1933):

- Բ. Մատենագրական.
 2. Հրատարակութիւն Գերբուածոց Պետրոս Աղաւեանի հանդերձ կենսագրութեամբ (1896):
 3. Խորհրդածութիւնի Եղիշէի Պատմութեան վրայ (1896):
 4. Մովսէս Խորենացի կը դառնայ ի Ե. դար (1935):
 - Գ. Եկեղեցական-պատմական.
 5. Հայ Եկեղեցոյ Պատարագի օրերն ու տեսակները (1899):
 6. Հայ ծէսն 1911ի ազգ. Սիւնիոյսի գործոց մէջ (1919):
 7. Յայնուրիւն նշխարաց եւ վկայաբանութիւն Եր. Տեառն Կոմիտասայ (1923):
 8. Կարեւոր խնդիրներ հայ Եկեղեցոյ պատմութեան (1927):
 9. Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ (1930):
 10. Պատարագամատոյց քննութեամբ բնագրին եւ արարողութեանց (1936):
 - Եկեղեցական-պատմական նիւթի հայող կարեւոր յօդուածներէն կ'արժէ յիշել հոս՝
 - ա. Հայ Եկեղեցին Եպիսկոպոսական ձեռնադրութիւն ունեցած է միշտ (Բզմ., 1906, 152—160), զրուած ընդդէմ Ուս. Կոնիքիբի յօդուածին (տե՛ս «Բանասէր», 1904 Սեպտ. եւ 1905 Յունիս):
 - բ. Սրբոց Նշխարները (Բզմ., 1906, էջ 543—546. 1907, էջ 6—12):
 - գ. Ժամահար եւ զանգակ (Բզմ., 1910, էջ 193—203):
 - դ. Կուսաստանի Հայաստանի մէջ (Բզմ., 1923, էջ 12—17, 43—47, 72—78):
 - ե. Հայ կանոնագրութեան ազգիւրներու մասին ունի ուսումնասիրութիւն մը զրուած Codificazione Canonica Orientaleի մէջ (Fonti, Պրակ Ը, էջ 139—168):
 - Դ. Ազգագրական՝
 11. Երգումնի հին Հայոց մէջ (1910, 1932²):
 12. Ճաշեր եւ խնայք հին Հայաստանի մէջ (1912):
 13. Հայ Դրօշները պատմութեան մէջ (1919, 1930²):
 14. Դասախարակութիւնն հին Հայոց փով (1923):
 15. Պատմութիւն հին հայ տարագրին (1924):
 16. Հայուհին պատմութեան առջեւ (1936):